

Հաշվապահների միջազգային դաշնությանն անդամակցող Հայաստանի հաշվապահների և աուդիտորների ասոցիացիան (ՀՀԱԱ) իրականացնում է Հաշվապահների միջազգային դաշնության (IFAC/ՀՄԴ) կրթական ստանդարտներին համապատասխան պրոֆեսիոնալ հաշվապահի և աուդիտորի որակավորում շնորհող կրթական ծրագիր:

ՀՀԱԱ որակավորման ծրագրի քննությունները հաջողությամբ հանձնելուց հետո և մասնագիտական փորձի պահանջներին բավարարման պայմաններում մասնակիցներին տրվում են ՀՀ օրենսդրության և միջազգային ստանդարտներին համապատասխան հաշվապահի և/կամ աուդիտորի որակավորումներ:

Ընդ որում ՀՀ օրենսդրությամբ հաշվապահի և աուդիտորի որակավորման քննություններն կազմակերպվում և անց են կացվում միայն ՀՀ-ում հավատարմագրված միակ կառույցի ՀՀԱԱ կողմից:

Ծրագրում ներառված դասընթացներն են

1. "Ֆինանսական հաշվառման հիմունքներ" (հայերեն, անգլերեն),
2. "Ֆինանսական տեղեկատվություն կառավարման համար" (հայերեն),
3. "Իրավագիտության հիմունքներ" (հայերեն),,
4. "ՀՀ հարկային օրենսդրություն" (հայերեն),
5. "Ֆինանսական կառավարում և վերահսկողություն" (հայերեն),
6. "Ֆինանսական հաշվետվությունների պատրաստում" (հայերեն),
7. "Աուդիտ և ներքին վերահսկողություն" առարկաները (հայերեն):

Նշված դասընթացները ներառում են արդիական գիտելիքներ ՀՄԴ պահանջներին համապատասխան և օգտակար կլինեն Ձեր ղեկավարած մարզի կազմակերպությունների ֆինանսների և հաշվապահության համապատասխան մասնագետներին:

Այս կիսամյակ դասընթացները կազմակերպվելու են անցանց, ինչը հնարավորություն կտա որակավորման ծրագրին մասնակցելու ՀՀ տարբեր մարզերի համապատասխան մասնագետների:

Դասընթացի տևողությունը 40 ժամ է, տեղի է ունենում շաբաթական մեկ անգամ երեկոյան ժամերին՝ անցանց (հեռավար), ինչը հնարավորություն է տալիս ծրագրի մասնակիցներին չկտրվել աշխատանքից և արդյունավետ տնօրինել ժամանակը՝ հասնելով լավագույն արդյունքի:

ՀՀԱԱ որակավորման դասընթացների (առանց քննության) առաջին վեց առարկաներից յուրաքանչյուրի վճարը 70 հազար դրամ է: Քննության վճարը կազմում է 30 հազար դրամ:

"Աուդիտ և ներքին վերահսկողություն" առարկայի դասընթացի արժեքը կազմում է 93 հազար դրամ, քննության վճարը՝ 7 հազար դրամ:

ՀՀԱԱ որակավորման ծրագրի գրանցման վերջնաժամկետը է 2020թ. հունիսի 16: Գրանցման և այլ մանրամասների համար կարող են զանգահարել հետևյալ հեռախոսահամարներով.

Հեռ.՝ (010) 24-91-78, (010) 23 71 02 (ն. 117, 101) , (077) 24-91- 78

Էլ. փոստ՝ aaaa@aaaa.am; URL: www.aaaa.am, Հասցե՝ Կոմիտաս 49/3, 6-րդ հարկ

Հայաստանի հաշվապահների և աուդիտորների

ասոցիացիայի գործադիր տնօրեն

Լ. Խաչատրյան